ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

# ԾՐԱԳԻՐ
# «ՀԱՅՈՑ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ»
## ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Կազմող՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 316: 391/395=919.81
ԳՄԴ 60.5+63.5(2Հ)
Հ 282

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը: Ծրագիր/ Կազմ.՝
Հ 282 Ռ. Նահապետյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014.-16 էջ:
Ծրագիրը նախատեսված է Պատմության ֆակուլտետի «ազգագրություն» մասնագիտացման մագիստրատուրայի I կուրսի ուսանողների համար

ՀՏԴ 316: 391/395=919.81
ԳՄԴ 60.5+63.5(2Հ)

ISBN 978-5-8084-1844-8

© ԵՊՀ հրատ., 2014
© Ռ. Նահապետյան, 2014

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(1 ժամ դասախոսություն)

Հասարակական և ընտանեկան հարաբերությունները իբրև մշակութային արժեքներ, դրանց ուսումնասիրության ազգագրական ըմբռնումները:

«Համայնք», «ազգ», «գերդաստան», «փոքր ընտանիք» հասկացությունների բնութագրումը:

Ամուսնությունը որպես «ազգ»-ի և ընտանիքի առաջացման ու գոյավորման սոցիալ-մշակութային երևույթ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004:
2. ***Նահապետյան Ռ.,*** Հայոց ազգակցական համակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2012:
3. ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան, 1941:
4. ***Карапетян Э.Т.,*** Армянская семейная община, Ереван, 1958.
5. ***Карапетян Э.Т.,*** Родственная группа “азг” у армян, Ереван, 1966.
6. ***Косвен М.О.,*** Семейная община и патронимия, М., 1963
7. ***Семенов Ю.И.,*** О стадиальной типологии общины. – в кн. Проблемы типологии в этнографии, М., 1978, с. 75-91.
8. ***Семенов Ю.И.,*** Происхождение брака и семьи, М., 1974.


## ԹԵՄԱ 1.
## ՀԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 19-20-ՐԴ ԴԴ.

(2 ժամ դասախոսություն)

Հայկական գյուղական համայնքը ռուսական և օսմանյան կայսրությունների վարչա-քաղաքական կառուցվածքների համակարգում. արևելահայ և արևմտահայ գյուղական համայնքները: Համայնքի և գյու-

ղական բնակավայրի տարածական և կառուցվածքային համապատասխանության հարցը: Գյուղական համայնքի կազմն ու կառուցվածքը: Համայնքի կառավարման պետական-վարչական և սովորութաիրավական սկզբունքները, կառավարման մարմինները: Եկեղեցու դերը համայնքի ներքին կյանքում: «Ազգ» - արենակցական խմբի և «Նահապետական գերդաստանի» մասնակցությունը համայնքի ներքին տնտեսական ու մշակութային կյանքին: Դրացիական հարաբերությունների բնույթը համայնքում: Անհատի դերը համայնքում: Համայնական աշխատանքների սեռա-տարիքային բաժանումը: Համայնական փոխօգնության ձևերը: Համայնական ծեսերն ու սովորույթները: Համայնքային նոր կառուցվածքների ձևավորումը և գործառույթները Հայաստանի Հանրապետությունում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Համբարյան Ա.Ա.,*** Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 52-56, նույնի՝ Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը 19-րդ դ. 2-րդ կեսին.- ՊԲՀ, 1984, № 1.
2. ***Հակոբյան Ս.,*** Գյուղական համայնքը Հայաստանում 15-18-րդ դդ., ՊԲՀ, 1973, թիվ 2:
3. ***Խաչիկյան Լ.Ս.,*** Հայ գյուղական համայնքը, ՊԲՀ, 1958, № 1:
4. ***Մանանդյան Հ.,*** Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934.
5. ***Նահապետյան Ռ.,*** Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին, «Երևանի համալսարան», 1977, [1] 2:
6. ***Նահապետյան Ռ.,*** Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ (19-րդ դ. երկրորդ կես – 20-րդ դ. սկիզբ), ԲԵՀ, 1979, [1] 1:
7. ***Նահապետյան Ռ.,*** Հայոց ազգակցական համակարգը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2012:
8. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայոց հյուրընկալման ավանդույթը (XIX-XX դդ.), ՊԲՀ, 2005, 1 (168), էջ 160-169:
9. ***Վարդանյան Վ.,*** Գյուղական համայնքները Վասպուրականում, IX-X դդ., «Լրաբեր հաս. գիտ.», 1978, [1] 3:
10. ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան, 1941, էջ 204-221:

11. ***Акопян М.В.***, Сельская община в Восточной Армении во второй половине XIX – начале XX вв., Ереван, 1988.
12. ***Егиазаров С.А.,*** Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889.
13. ***Мкртчян А.А.,*** Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.), Ер., 2010.
14. ***Мочалов В.Д.,*** Сельская община в Закавказье. – “Исторические записки”, 1960, № 67.

## ԹԵՄԱ 2.
## «ԱԶԳ» – ԱՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
## (2 ժամ դասախոսություն)

***Հայ ժողովրդի ազգակցական համակարգը և ազգակցության տերմինները:*** «Ազգ» ազգագրական հասկացությունը և նրա պատմական կապերը տոհմի հետ: Ազգի կազմավորման ընթացքը, ազգի կազմավորումը մեկ ընտանիքի աճման հիման վրա: Որոշ ավան-դություններ տվյալ ազգի մայր ընտանիքի և նրա նահապետի վերաբերյալ. նախնու պաշտամունքի հետքեր այդ ավանդություններին մեջ: Ազգ կազմելու ընթացքը XIX և XX դդ. առաջին քառորդի տվյալների համաձայն: «Ազգանուն» տերմինի սկզբնական ձևերը. մականունը որպես ազգանուն տերմինի զուգակիցը: Նախնուց, զբաղմունքներից և այլ երևույթներից ծագող ազգանուններ: Ազգանունը փոխելու դեպքերը, պատճառները, հետևանքները: Կրկնակի ազգանունները և դրանց պատմական արմատները:

***«Ազգ»-ի տնտեսական միասնությունը:*** Ազգակցական խմբերի վարելահողերի, անտառամասերի, արոտավայրերի տիրապետման սկզբունքները: Ազգի համընդհանուր այգիները և գործիքները, արտադրական շենքերն ու կալերը, թոնիրները, սանդերը և այլն: Ազգակցական ընդհանուր պահպանակներ՝ «դաղմա»-ները անասնապահության մեջ և դրանց ճյուղավորումը: Սեփականության ժառանգման կարգը: Սոցիալական անհավասարության դրսևորումները ազգատոհմի ներսում: Փոխօգնության ձևերը ազգատոհմի ներսում:

***Ազգատոհմի տարածքային միասնությունը:*** Ազգակցական թաղերը, դրանց անվանումները: Ազգակցական թաղերի գոյացման տնտեսա-

կան և սոցիալական պատճառները: Ազգակցական կցաքաղեր ամառանոցներում: Ձմեռանոցները և կալատեղերը բնակավայրերի վերածվելու և ազգակցական թաղերի ստեղծման ընթացքը: Ազգերի թաղավորման ձևերի պահպանումը 1920-1930 - ական թթ. և դրանց վերացման ընթացքը 1950-90-ական թթ.:

*Ազգատոհմի գաղափարական կապերը:* Ազգի նախնիների հիշատակը հավերժացնելու միջոցառումները: Անունության արգելքն ազգատոհմի ներսում: Ազգակցական գերեզմանաշարքեր և ազգակցական գերեզմանոցներ: Ազգին կամ ազգանդամին պատկանող սրբությունները (սրբատեղ, սուրբ գրքեր, շարժական առարկաներ): Ազգատոհմի ընդհանուր ղեկավարը: Ազգակցական ընդհանուր ժողովները և ազգատոհմի միասնության պրոպագանդան: Մայր ընտանիքների դերը կրտսեր ընտանիքների դաստիարակության գործում: Կենտրոնախույս ընտանիքների նկատմամբ ազգատոհմի բռնած դիրքը: Ազգատոհմի բարոյական կապերը: Իգական սեռի պատվի պաշտպանությունը: Հոգևոր ազգակցություն՝ կնքահայրություն, պսակի քավորություն, որդեգիրների կապերը և այլն: Տոհմածառեր կազմելու և պատմությունը գրելու գաղափարական արմատները:

Ազգակցական հարերերություններում տարածքային և տնտեսական կապերի թուլացումը նոր ժամանակներում: Ազգի գաղափարական միասնության պահպանվածության աստիճանը, դրա նորովի դրսևորումները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Բդոյան Վ.,*** Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 155-165:
2. ***Կոսվեն Մ.Օ.,*** Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան, ՊԲՀ, 1963, [1] 1:
3. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները աղձնիքահայության ազգակցական խմբերի մեջ 19-րդ դ. և 20-րդ դարի սկզբին, «Երևանի համալսարան» 1977, [1] 2, էջ 47-50, նույնի՝ Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները աղձնիքահայության մեջ, ԲԵՀ, Երևան, 1979, [1] 1:
4. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ). Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2012:
5. ***Бдоян В.А.,*** Кровнородственный “азг” и родственные отношения у армян.- СЭ. 1952, № 1.

6. ***Бутинов Н.А.,*** Типология родства.- В кн. Проблемы типологии в этнографии, М., 1978, с. 66-74
7. ***Карапетян Э.Т.,*** Родственная группа “азг” у армян, Ереван, 1966.
8. ***Косвен М.О.,*** Семейная община и патронимия, М., 1963

## ԹԵՄԱ 3.
## ՀԱՅԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ
**(3 ժամ դասախոսություն)**

«Ընտանիք» հասկացության առումները: Ընտանիքի տիպերի պատմական հաջորդականությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ընտանիքի հիմնական ձևերը 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին: Մեծ և փոքր ընտանիքների բնութագիրը:

Գերդաստան, նրա կազմն ու կառուցվածքը: Ոչ արյունակից անդամների առկայությունը գերդաստանում՝ որդեգրում, տանու ծառաներ, տնփեսայություն:

Գերդաստանի գաղափարական և տնտեսական հիմքը: Գերդաստանի եկամուտները, դրանց հայթայթման եղանակներն ըստ տնտեսության ճյուղերի: Հիմնական և օժանդակ եկամուտներ: Պանդխտությունից ստացվող եկամուտներ: Սեփականության ձևերը գերդաստանում: Աշխատանքի սեռատարիքային բաժանման կարգը գերդաստանում: Ավագության կարգը: Ղեկավարությունը:

Իրավահարաբերությունները գերդաստանում: Վարվելակարգը կարգավորող նորմերը: Արգելանքներ (տաբուներ): Բերանակապություն, չխոսկանություն և դրանց պատմական մեկնաբանությունը: Կեցվածքի բարեկրթություն: Նստելու, ճաշելու, ննջելու բարեկրթություն: Դիմելու ձևերը գերդաստանում: Գերդաստանն որպես սերնդաճն ապահովող հիմնական միավոր: Ընտանեկան, աշխատանքային, ազգակցական, համայնքային, հայրենասիրական, ռազմական, բարոյական, կրոնական դաստիարակություն: Հյուրընկալումը գերդաստանում:

Գերդաստանի տրոհումը և դրա սոցիալ-տնտեսական պատճառները: Գերդաստանի տրոհման առաջին նշանները: Առանձնացման միտումները և բաժանքի հասնելու միջոցառումները: Բուն բաժանք, դրա տնտեսական ու բարոյական պատճառները: Բաժանքի իրավական

կարգավորումը: Շենքերի բաժանման կարգը: Հողաբաժանում: Շարժական գույքի, անասունների և այլնի բաժանման ձևերը: Գերդաստանների իսպառ վերացումը Արևմտյան Հայաստանում եղեռնի ժամանակ և Խորհրդային Հայաստանում 1920-ական թթ.:

***Փոքր ընտանիք.*** Նրա սոցիալ-հոգեբանական և տնտեսական հիմքը: Փոքր ընտանիքի կազմը: Գերդաստանական սովորույթների պահպանվածության աստիճանը փոքր ընտանիքում: Իրավահարաբերությունները փոքր ընտանիքում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Բդոյան Վ. Հ.,*** Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 117-132:
2. ***Գաբրիելյան Մ.,*** Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Երևան, 2005:
3. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004:
4. ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան, 1941, էջ 105-204:
5. ***Վարդումյան Դ.Ա.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1958:
6. ***Վարդումյան Դ.Ա., Կարապետյան Է.Տ.,*** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963:
7. Армяне. Серия “Народы и культуры”, М., 2012.
8. ***Карапетян Э.Т.,*** Армянская семейная община, Ереван, 1958.
9. ***Косвен М.О.,*** Семейная община и патренимия, М., 1963.
10. ***Косвен М.О.,*** История и этнография Кавказа, М., 1961.
11. Народы Кавказа (Серия “Народы мира”), т II, М., 1962.
12. ***Тер-Саркисянц А.Е.,*** Современная семья у армян, М., 1972.
13. ***Тер-Саркисянц А.Е.,*** Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, էջ 130-154:

## ԹԵՄԱ 4.
## ՀԱՅԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ
### (4 ժամ դասախոսություն)

***ա) Ամուսնություն և հարսանիք.***

Ամուսնության ձևերը և ծիսական սովորույթներն ըստ ազգագրական և բանահյուսական տվյալների: Բազմայրության, բազմակնության, տեգրամուսնության և քենամուսնության, օրորոցախաղի, առևանգմանբ և գնմամբ ամուսնության հետքերը բանահյուսության և ազգագրության համաձայն: Ամուսնացողների տարիքը:

Ազգեղուրս ամուսնության սկզբունքը՝ «հաս-չհաս» հակադրույթը հայոց կանոնական և սովորութային սկզբունքների ոլորտում: «Յոթ պորտի» էությունը: Ազատ ընտրության և ամուսնության երևույթների զարգացումը XIX-XX դդ.:

***Նախահարսանեկան արարողակարգ. Աղջիկտես, խնամախոսություն, խոսքկապ:***

***Նշանդրեք*** (անվանումները, ձևերը, ժամանակը, մասնակիցները, նշանը, հյուրասիրման կարգը, նշանօրհնեքն ու «նշան» տալը, հարսի նվերները, ընծայաբերություն և փոխանակում, հարսնատեսն ու փեսատեսը «հղե կտրելը» կամ «օր կապելը»:

***Հարսանիք:*** Հարսանեկան զգեստ, շորձևեք, ժամանակը հարսանիքում, հրավեր, քավոր, ալըրմաղեք, գինեթափեք, եզնմորթեք, հարսանքատուն հարդարելն ու «թախտ կապելը», «հալավօրհնեք» և «ազպանստում», «ազպալվածք» և «բաղնիքի» ծես. «փեսաքրաշ», «թագավոր կարգել և «ծառ կապել», «փեսի ծառ», «ծաղկոցներ» կամ հարսի «գլուխ գովալ», հինադրեք, հարսնառ, շարժման սխեման և խնամիների «ճակատամարտերի» ծեսեր, ամուսնության վավերացում՝ թնորի պսակից զագս [ՔԿԱԳ], խնջույք հարսի տանը, շեմի ծեսեր, զոհաբերություն շեմին, լավաշով դիմավորելու ծեսը, թրի տակով անցնելը, ափսե կոտրելը, խնջույք փեսայի տանը, հավքռունք, փեսադատ, «թագվերացից» «կարմիր խնձոր»:

***Հետհարսանեկան արարողակարգ.*** նորահարսի առօրյա պարտականությունների և իրավունքների մեկնարկ, «ոտնլվան», «ավլելը» և «տնից դուրս բերելը», «գլուխլվա», խնամականչ, քառասունք, դարձ: Դրանց մեկնաբանությունները:

Քավորություն՝ հոգևոր ազգակցության ստեղծումը: Մակարների ընտրությունը փեսատանը և ծաղկոցավորների ընտրությունը հարսի տանը: «Կտրել-կապելու» սովորույթը և «գլխագնի» ու «օժիտի» դրսևորման ձևերը: Ազգատոհմի ու համայնքի նյութական օգնությունը երկու կողմերին:

Օժիտի կազմը: Անձնական սեփականությունը որպես հարսնացուի օժիտ: Օժիտը որպես մասնավոր սեփականության ձև: Նվերները որպես օժիտի բաղկացուցիչ մաս: Օժիտը արդի կենցաղում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Խ., «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» (տե՛ս Խ. Աբովյան, Երկեր, հ. 8, էջ 154-190):
2. ***Բդոյան Վ. Հ.,*** Հայ ազգագրություն, էջ 136-155:
3. ***Իփեկյան Գ.,*** Քավոր, ԱՀ, գ. 24, Թիֆլիս, 1913:
4. ***Կարապետյան Է.Տ.,*** Օժիտը հայոց մեջ, Երևան, 1978:
5. ***Հովհաննիսյան Ս.Հ.,*** Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976.
6. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004, էջ 111-163:
7. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2007:
8. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական տվյալների, ՊԲՀ, 2007, 1 (174), էջ 123-137:
9. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում, Գիտական աշխատություններ, VIII, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2005, էջ 53-59:
10. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Ամուսնահարսանեկան սովորույթները սասունցիների ընտանեկան արդի կենցաղում, ԲԵՀ, 2006, թիվ 3(120), էջ 52-60:
11. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը (Ուսումնական ձեռնարկ), մաս 1, Երևան, 2009:
12. ***Շագոյան Գ.,*** «Յոթ օր, յոթ գիշեր». հայոց հարսանիքի համայնապատկեր, ՀՀ «Գիտություն» հրատ., Երևան, 2011:
13. ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Եր., 1931, էջ 242-247, հ. 3, Երևան, 1941, էջ 89-132:
14. ***Վարդումյան Դ.Ս., Կարապետյան Է.Տ.,*** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963, էջ 94-117:
15. ***Վարդումյան Դ.Ս.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1958:
14. Армяне. Серия "Народы и культуры", М., 2012.

16. ***Карапетян Э.Т.,*** Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни, ԱՀՊՊԹ, հ. 3-րդ, Երևան, 1950, էջ 73-144:
17. ***Карапетян Э.Т.,*** Об одном персонаже армянской свадьбы, ՊԲՀ, 1965, № 2, էջ 211-216:
18. ***Тер-Саркисянц А.Е.,*** Современная семья у армян, М., 1972.
19. ***Тер-Саркисянц А.Е.,*** Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, 154-188 с.
20. ***Харатян З.,*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, ՀԱԲ, հ. 17, Եր., 1989, էջ 11-20:

### *բ) Տղաբերք և մանկատածություն.*

ՈՐԴԵԾՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՎ ՀԵՏՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԾԵՍԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Ամլությունը բուժելու ժողովրդական հնարներն ու հավատալիքները: Հղիության պահպանությանն ուղղված սովորույթներն ու ծեսերը:

ԾՆՆԴՅԱՆ ԾԵՍԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Մանկան ծնունդն իբրև «անցման ծես»՝ մեկ աշխարհից մի նոր աշխարհ՝ սովորույթներն ու ծեսերը կապված դրա հետ: Տատմեր: Ազգատոհմի և համայնքի վերաբերմունքը:

ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹՅԱՆ ԾԵՍԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման կարևոր փուլ: Անվանակոչման կարգը: Քառասունքին առնչվող ծեսերն ու սովորույթները:

Մանկան խնամքը կյանքի առաջին մեկ տարվա ընթացքում: Օրոր: Մոր ու մանկան սնունդը, մանկանը լողացնելու, աղելու, առաջին անգամ մազ կտրելու, մանկան ոտք ելնելու, առաջին ատամները հանելու, ուշ խոսող երեխայի նկատմամբ կիրառվող ծեսերն ու սովորույթները:

Մանկանը հիվանդություններից զերծ պահելու կամ բուժման իրական և հմայական հնարները:

Սնոտիապաշտական նախապաշարումներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Բդոյան Վ.Հ.,*** Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայոց մեջ.- Աշխատություններ ՀՊՊԹ, հ. 3, Երևան, 1950, էջ 5-71:
2. ***Լալայան Ե.,*** Տղաբերքի սովորույթների զարգացումը հայոց մեջ, Տեղեկագիր գիտության և արվեստի, Երևան, 1931, № 5:
3. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 163-184:
4. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:
5. ***Косвен М.О.,*** Кто такой крестный отец, СЭ, 1963, № 3.
6. ***Смирнова Я.С.,*** Детский и свадебный циклы обычаев и обрядов у - народов Северного Кавказа, КЭС, т. 6, М., 1976, с. 47-98.
7. ***Тер-Саркисянц А.Е.,*** Армяне, М., 1998, стр. 188-195.
8. ***Харатян З.В.,*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян, ՀԱԲ, 17, Երևան, 1989, էջ 21-30:
9. Армяне. Серия “Народы и культуры”, М., 2012.


### *գ) Մահ, հուղարկավորում, մեռելոց.*

#### ՄԱՀԸ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ժողովրդական պատկերացումները ճակատագրի, հոգու և մահվան մասին: Հոգեվարք և մահ: Ննջեցյալին լողացնելու և պատանքելու ծեսերն ու սովորույթները:

#### ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Հուղարկավորում, ննջեցյալին ուղեկցելու սովորույթները: Կնոջ, տղամարդու, երեխայի հուղարկավորման սովորույթների տարբերությունները: Կախարդի անուն հանած մարդու, անձնասպանի, խեղդվածի, անհաղորդ մեռածի, կայծակնահար եղածի հուղարկավորման սովորույթները, նրանց գերեզմանների նկատմամբ ժողովրդական վերաբերմունքը: Սգո տևողությունը:

#### ՀԻՇԱՏԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Մեռելոցներ, նրանց թիվն ու ժամանակները: Փոխադարձ օգնության ձևերը հուղարկավորման և մեռելոցի պարագային: Հուղարկավորման կրած փոփոխությունները ներկայումս:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Աբեղյան Մ.,*** Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. 7, Երևան, 1978, էջ …
2. ***Բդոյան Վ.Հ.,*** Հայ ազգագրություն, Երևան, 1972, էջ 171-180:
3. ***Հարությունյան Ե.,*** Թաղման հեթանոսական և միջնադարյան սովորությունների մասին.- ՊԲՀ, 2001, թիվ 1:
4. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում, «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. 1988, [1] 4:
5. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Սասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր (հուղարկավորության ծեսեր ու սովորույթներ), ԲԵՀ, 1987, № 3:
6. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 184-201:
7. ***Харатян З.,*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян.- ՀԱԲ, հ. 17, Եր., 1989, էջ 30-38:
8. ***Тейлор Э.,*** Первобытная культура, М., 1936.
9. ***Токарев С.А.,*** Ранние формы религии, М., 1964, “Погребальный культ” ·գլուխը:
10. ***Токарев С.А.,*** Религия в истории народов мира, М., 1976, с. 183-185.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ***Աբեղյան Մ.,*** Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. 7, Երևան, 1978, էջ …
2. ***Բդոյան Վ.Հ.,*** Հայ ազգագրություն, Երևան, 1972, էջ 171-180:
3. ***Գաբրիելյան Մ.,*** Հայկական ընտանիքն անցումային շրջանում (ազգաբանական ուսումնասիրություն), Երևան, 2005:
4. ***Լալայան Ե.,*** Ջավախք, Երկեր, հ. 1, Երևան, 1983:
5. ***Լալայան Ե.,*** Գանձակ, Երկեր, հ. 2, Երևան, 1988:
6. ***Լալայան Ե.,*** Վարանդա, Երկեր, հ. 2, Երևան, 1988:
7. ***Լալայան Ե.,*** Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, 2004:
8. ***Կարապետյան Է.,*** Օժիտը հայոց մեջ (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 1978:
9. ***Հարությունյան Ե.,*** Թաղման հեթանոսական և միջնադարյան սովորությունների մասին.- ՊԲՀ, 2001, թիվ 1:
10. ***Հովհաննիսյան Ս.Հ.***, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976:
11. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Ժողովրդական հավատալիքների համակարգը հայոց ընտանեկան ծիսակատարություններում, «Լրաբեր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. 1988, [1] 4:
12. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Սասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր (հուղարկավորության ծեսեր ու սովորույթներ), ԲԵՀ, 1987, № 3:
13. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 184-201:
14. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2007:
15. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Քավորը հայոց մեջ (ըստ աղձնիքահայերի ազգագրական նյութերի), ՊԲՀ, 2007, թիվ 1 (174), էջ 123-137:
16. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1 (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2009:
17. ***Նահապետյան Ռ.,*** Աղձնիքահայերի մանկան ծննդի և խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը (պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:

18. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ). Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2012:
19. ***Նահապետյան Ռ.Ա.,*** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013:
20. ***Շագոյան Գ.,*** «Յոթ օր, յոթ գիշեր» (Հայոց հարսանիքի համայնապատկեր), Երևան, 2011:
21. ***Սամուելյան Խ.,*** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, հ. 3, Երևան, 1941:
22. ***Վարդումյան Դ.,*** Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956:
23. ***Վարդումյան Դ., Կարապետյան Է.,*** Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963:
24. ***Акопян М.В.,*** Сельская община в Восточной Армении во второй половине XIX – начале XX вв., Ер., 1988.
25. Армяне (Серия “Народы и культуры”), М., 2012.
26. ***Егиазаров С.Р.,*** Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889.
27. ***Карапетян Э.Т.,*** Армянская семейная община, Ер., 1958.
28. ***Карапетян Э.Т.,*** Родственная группа “азг” у армян, Ер., 1966.
29. ***Косвен М.О.,*** История и этнография Кавказа, М., 1961.
30. ***Косвен М.О.,*** Семейная община и патронимия, М., 1963.
31. ***Мкртчян А.***, Общественный быт Нагорного Карабаха (Вторая половина XIX – начало XX вв.), Ереван, 2010.
32. ***Семенов Ю.И.,*** Происхождение брака и семьи, М., 1974.
33. ***Тейлор Э.,*** Первобытная культура, М., 1936.
34. ***Тер-Саркисянц А.,*** Современная семья у армян, Москва, 1972.
35. ***Тер-Саркисянц А.,*** Армяне. История и этнокультурные традиции, М., 1998.
36. ***Токарев С.А.,*** Ранние формы религии, М., 1964, “Погребальный культ” գլուխը:
37. ***Токарев С.А.,*** Религия в истории народов мира, М., 1976, с. 183-185.
38. ***Харатян З.,*** Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян.- ՀԱԲ, հ. 17, Եր., 1989, էջ 30-38: